ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԻՔՆԵՐԸ ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի 15-րդ ենթակետի և ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 04.07.2018թ. թիվ 13/15-Լ որոշմամբ հաստատված Հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգի 5–րդ կետի պահանջներով,

հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհրդի 18.12.2019թ. թիվ 24/22-Լ որոշմամբ սահմանված՝ Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի հանրային պաշտպանների հաստիքների թվաքանակը (59),

հաշվի առնելով հանրային պաշտպանների մասնագիտացումները սահմանելու և հաստիքները տեղաբաշխելու անհրաժեշտությունը,

ի գիտություն ընդունելով Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի առաջարկությունը,

ՈՐՈՇԵՑԻ՝

1. 2020 թվականի հունվարի 1-ից **59 (հիսունինը)** հանրային պաշտպանի հաստիքները տեղաբաշխել հետևյալ կերպ՝
   1) Երևան քաղաքում՝ **31 (երեսունմեկ)** հաստիք, որից 22 (քսաներկու) հաստիքը՝ քրեական մասնագիտացմամբ, իսկ 9 (ինը) հաստիքը՝ քաղաքացիական (վարչական) մասնագիտացմամբ.
   2) մարզերում՝ **28 (քսանութ)** հաստիք՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 15.11.2019թ. թիվ 472-Լ որոշումը:
3. 2020 թվականի հունվարի 1-ից ուժը կորցրած ճանաչել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 15.11.2018թ. թիվ 395-Լ որոշումը:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

20 դեկտեմբերի 2019թ.
թիվ 514-Լ
ք. Երևան

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահի
20.12.2019թ. թիվ 514-Լ որոշման

ՀՀ փաստաբանների պալատի
նախագահ՝ Արա Զոհրաբյան

ՄԱՐԶԵՐՈՒՄ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՀԱՍՏԻՔՆԵՐԸ

№	ՀՀ մարզ	ՀՊԳ նստավայր	Հաստիքների բաշխում			Հաստիք-ների ընդ. քանակը	ՀՊ-ների քանակը	Գործունեության վայր
1	2	3	4			5	6	7
1.	**Արագածոտն**	Աշտարակ	1	0,5		2	3	**Աշտարակ, Ապարան, Թալին**
			0,5					
2.	**Արարատ**	Արտաշատ	0,5	0,5		3.25	6	**Արտաշատ, Մասիս, Արարատ, Վեդի**
			0,5	0,5	0,25			
		Մասիս	1					
3.	**Արմավիր**	Արմավիր	1	0,5	0,5	4	6	**Արմավիր, Էջմիածին**
		Էջմիածին	1	0,5	0.5			
4.	**Գեղարքունիք**	Գավառ	0,5			2	4	**Գավառ, Սևան, Մարտունի, Վարդենիս, Ճամբարակ**
		Սևան	0,5	0,5				
		Վարդենիս	0,5					
5.	**Կոտայք**	Հրազդան	1	0,5		4	7	**Հրազդան, Չարենցավան, Եղվարդ, Աբովյան**
		Աբովյան	0,5	0,5	0,5			
		Եղվարդ	0,5	0,5				
6.	**Սյունիք**	Կապան	0,5	0,5		2,75	6	**Կապան, Գորիս, Սիսիան, Քաջարան, Մեղրի, Ագարակ**
			0,5	0,5				
		Գորիս	0,5	0,25				
7.	**Վայոց Ձոր**	Եղեգնաձոր	0,5	0,5		1	2	**Եղեգնաձոր, Վայք**
8.	**Տավուշ**	Իջևան	0,5	0,5	0,5	2,25	5	**Իջևան, Դիլիջան, Նոյեմբերյան, Բերդ**
		Բերդ	0,5					
		Դիլիջան	0.25					
9.	**Լոռի**	Վանաձոր	1	1		4	6	**Վանաձոր, Սպիտակ, Ստեփանավան, Տաշիր, Ալավերդի**
			1	0,5	0,25			
		Ալավերդի	0,25					
10.	**Շիրակ**	Գյումրի	1	1		2,75	5	**Գյումրի, Արթիկ, Մարալիկ, Աշոցք**
			0,25	0,25	0,25			
Ընդհանուր թիվը						**28**	**50**	

*** (գործում է 2020 թվականի հունվարի 1-ից)**